«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ժողովրդական բանահյուսության կրթադաստիարակչական արժեքը տարրական դպրոցում

Առարկա՝ Մայրենի

Ուսուցիչ՝ Անի Հովսեփյան

Դպրոց՝ Մ. Նալբանդյանի անվան հ 33 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Միդա Խալաթյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ1. Ժողովրդական բանահյուսության կրթադաստիարակչական արժեքը տարրական դպրոցում..... 5

Գլուխ 2. Ժողովրդական բանահյուսության ժանրերի ուսուցումը տարրական դպրոցում (հետազոտական մաս) իրականացման նկարագրություն և արդյունքների վերլուծություն ... 15

Եզրակացություն 27

1. Ժողովրդական բանահյուսությունն ազգային մշակույթի հարուստ և մեծարժեք բնագավառներից է, առանց որի հնարավոր չէ պատկերացում կազմել աշխատավոր ժողովրդի պատմության մասին: 27

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 28

Ներածություն

Ժողովրդական բանահյուսության ուսուցումը լավագույն միջոցներից է երեխաներին իրենց արմատներին ծանոթացնելու, հայեցի մտածողություն ու դաստիարակություն սերմանելու համար:

<<Ժողովրդական բանահյուսության կրթադաստիարակչական արժեքը>> թեման ժողովրդի հոգևոր մշակույթի վերածննդի ապահովման արդիական համատեքստում է և կարևոր հիմնահարցերից մեկն է: Այն ամենից առաջ պայմանավորված է բարոյագիտական և գեղագիտական նորմերի վերականգման անհրաժեշտությամբ: Մարդկային քաղաքակրթությունը իր զարգացման յուրաքանչյուր փուլում ունի իրեն բնորոշ արժեհամակարգը: Հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններով պայմանավորված է նաև արժեհամակարգի փոփոխությունները: Ներկա ժամանակներում շատացել են տեղեկատվության աղբյուրները: Մեր կյանք են ներխուժել և ամեն օր ներխուժում են օտար սովորույթներ ու բարքեր: Երեխաներին դուր են գալիս օտարերկրյա ֆիլմերն ու մուլտֆիլմերը, խաղերը: Իհարկե, չանտեսելով բարձրարժեք համաշխարհային ֆիլմերն ու երաժշտությունը,կարևորում ենք այն, որ դպրոցականներին պետք է մշտական կապվածության մեջ պահել ազգային արժեքների հետ: Նոր տեխնոլոգիական այս աշխարհը աշակերտներին այսօր հեռացրել է գրքից: Երեխաները գերադասում են համացանցից տեղեկությունը, քան գրքեր ընթերցելուց: Ուստի, շատ կարևոր է առաջացնել աշակերտների սերն ու հետաքրքրասիրությունը գրքի նկատմամբ:

Ժողովրդական բանահյուսության ժանրերը դաստիարակչական հզոր միջոցներ են: Դրանք հարստացնում են երեխայի կենսափորձը, ընդլայնում գիտելիքները, նպաստում նրա բնավորության և աշխարհայացքի ձևավորմանը, արմատավորում և զարգացնում են հայրենասիրությունը, աշխատասիրությունը, ազնվությունը, բարոյականությունը և այլն: Այս ժանրերը սերտորեն կապված են մեր երկրի պատմության և դավանանքի հետ: Լինելով մատչելի, դիպուկ և հետաքրքրաշարժ՝ ժողովրդական բանահյուսության ժանրերը նպաստում են նաև մտային որակների ձևավորմանն ու զարգացմանը:

Բանահյուսությունը, սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից, եկել, հասել է մեր օրերը: Հոգեհարազատ լինելով բոլորին՝ առանց տարիքային սահմանափակման, ժողովրդական բանահյուսությունն ունի մեծ դեր արժեքային համակարգի ձևավորման գործում: Այն ճանապարհ է հարթում դեպի մայր ծննդավայրի խորքերը: Մանկան ունակությունների ու հետաքրքրությունների, նրա դաստիարակության տարրական ըմբռնումներին հաղորդակցվելն իրականացվում է մոր և առաջին ուսուցչի միջնորդությամբ: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում մեծ դեր ունի հատկապես դպրոցը: Հետևաբար, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ուսուցման մեթոդներին: Կարևոր է, որ մանկավարժն ապահովի աշակերտի անհատական զարգացումը՝ հիմք ընդունելով այն բոլորը, ինչին նա արդեն տիրապետում է, պետք է այնպիսի միջավայր ստեղծի, որում աշակերտը կարողանա ցուցաբերել իր ունակությունները, կարողությունները և ստեղծագործական որակները: Բազմակողմանի և ներդաշնակ անձի ձևավորման և դաստիարակության գործում մեծ դեր ունի բանահյուսությունն՝ իր ժանրային տեսակներով: Սա է պայմանավորում քննարկվող աշխատանքի ***արդիականությունը***:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել բանահյուսության դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում:

Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունների ձևավորող, զարգացնող, դաստիարակող արժեքները:

Հետազոտության նորույթն *այն է, որ տարրական դպրոցում ժողովրդական բանահյուսության ժանրերի ուսուցման միջոցով մենք կարող ենք բարձրացնել սովորողների ընդհանուր զարգացվածության մակարդակը, զինել նրանց թե՛ տեսական, թե՛ գործնական գիտելիքներով, նպաստել նրանց ճանաչողական գիտելիքների և կարողությունների ձևավորմանը:*

Գլուխ1. Ժողովրդական բանահյուսության կրթադաստիարակչական արժեքը տարրական դպրոցում

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունների ամբողջություն է, որ ձևավորվել է մարդկային լեզվի ու մտածողության ծագման զուգընթաց:

Ժողովրդական բանահյուսությունը ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել և հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծ, որն ունի շատ հին ծագում:

Ժողովրդական բանահյուսությունը հազարամյակներ շարունակ աշխատավոր ժողովրդի ձեռքին հանդիսացել է դասակարգային պայքարի զենք: Այն արտացոլում է ժողովրդի դարավոր պայքարը արտաքին և ներքին թշնամիների դեմ, նրա անսահման հայրենասիրությունը, մարդասիրությունը, փիլիսոփայությունը, սովորությունները, կենցաղը, օպտիմիստական գաղափարներն ու երազանքները՝ բնության վրա իշխելու և սոցիալական չարիքները վերացնելու ուղղությամբ:

Բանահյուսությունը կյանք է առել ոչ թե իշխանական դղյակներում, այլ գյուղական անշուք խրճիթներում՝ հասարակ ժողովրդի կողմից: Ժողովրդի հենց այդ ստեղծագործական կարողությամբ էլ պայմանավորվում է ժողովրդական բանահյուսության գլխավոր առանձնահատկություններից մեկը՝ նրա կոլեկտիվ բնույթը: Բանահյուսությունը կոլեկտիվ ստեղծագործություն համարել չի նշանակում, թե նրա այս կամ այն գործը հորինվում է կոլեկտիվ ձևով, քանի որ կոլեկտիվիզմը դրսևորվում է բացառապես անհատի միջոցով, նրա անհատական մտածողության ձևով: Այժմ, քանի որ անհատն ապրում է կոլեկտիվի միջոցով և ներկայացնում է կոլեկտիվին, արտահայտում նրա ձգտումներն ու երազանքները, այդ պատճառով էլ նրա ստեղծածը համակում է բոլորին և բերանից բերան անցնելով դառնում սերունդների սեփականությունը՝ հանդես գալով իբրև ժողովրդի ստեղծագործություն: Այսպիսով, բանահյուսական ստեղծագործությունները վերագրվում են հանրությանը և ոչ

թե մի առանձին անհատի:

Բանահյուսության մյուս բնորոշ առանձնահատկությունը նրա բանավոր հյուսվածք լինելն է, բանավոր կերպով ստեղծվելը և ապա՝ բանավոր գոյությունը: Բանահյուսական գործերի ստեղծման գործընթացը տեղի է ունենում ոչ թե գրավոր ձևով, այնպես ինչպես լինում է պրոֆեսիոնալ գրողների մոտ, ովքեր իրենց մտքերն ու զգացումներն անմիջապես թղթին են հանձնում, այլ բանավոր ձևով: Մյուս կարևոր առանձնահատկությունը բազմապատում լինելն է, այսինքն՝ նույն հյուսվածքի տարբեր պատումներ ունենալը: Առաջին երգի, հեքիաթի, վիպերգի կամ էպոսի առաջին պատումի ստեղծումից կարճ ժամանակ անց հանդես է գալիս նրա երկրորդ պատումը, ապա երրորդը, չորրորդը, հինգերորդը և այլն: Օրինակ, մեր հերոսական էպոսը՝ <<Սասնա ծռերը>> մեր օրեր է հասել շուրջ 150 պատումով: Կռավցովը նշում է. <<Բանահյուսության հիմնական հատկանիշը իր ստեղծագործությունների տարբերակումներն ու պատումներն են:Եթե հայտնի չի որևէ ստեղծագործության տարբերակ, ապա վստահորեն չենք կարող ասել, որ այն կապրի ժողովրդի մեջ: Իսկ ստեղծագործությունը, որ չի ապրի ժողովրդի մեջ, չի վերագրվել բանահյուսությանը>>: [20, էջ 6] Այս ամենից հետևում է, որ պատումներն ու տարբերակները բանահյուսության բնորոշ առանձնահատկություններն են, և որ առանց նրանց չկա և չի կարող լինել բանահյուսությունը:

Բանահյուսության մյուս առանձնահատկությունը նրա որոշ հյուսվածքների միահյուսված բնույթն է, այսինքն՝ արվեստի տարբեր ճյուղերի նույն հյուսվածքներում հադես գալը: Այդպիսին են, օրինակ, պարերգերը: Դրանցում կա խոսք, երաժշտություն և պար, ինչը ենթադրում է բանահյուսական ստեղծագործության կապը գրականության, երաժշտության և պարարվեստի հետ: Հայ բանահյուսության հարուստ գանձարանում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները: Դրանք սերնդափոխանցման ճանապարհով կրած փոփոխություններին կից, մաքրվել են այն ամենից, ինչ խորթ է մանկական մտքին և սրտին: Ժողովրդական մանրապատում ստեղծագործություն ասելիս պետք է նկատի ունենալ այն

ստեղծագործությունները, որոնք ստեղծվել են ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների կողմից:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները պետք է դիտել որպես երեխայի ու շրջապատի՝ մեծահասակների հետ հաղորդակցվելու արդյունք: Այս ստեղծագործություններում մանկավարժական և հոգեբանական չափանիշներին միահյուսվում է գեղարվեստականը: Երեխաների մտավոր և հոգեկան առանձնահատկություններին համապատասխան ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները պետք է ներկայացված լինեն մատչելի, սեղմ, դիպուկ, սահուն լեզվով, ջերմ զգացմունքով, հետաքրքրաշարժ ձևով: Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների հիմքում ընկած է ժողովրդի գեղարվեստական խոսքը, նրա բանահյուսությունը: Հենց այդ իմաստուն և բազմահարուստ աղբյուրից են սկզբնավորվել ու սնունդ առել երեխաների առաջին պատկերացումները: Ժողովրդական հանելուկները, առած-ասացվածքները, շուտասելուկները, խաղիկները և այլ բնույթի ստեղծագործություններ դարեդար կրթել և դաստիարակել են երեխաներին: Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին երեխաները ծանոթանում են դեռևս գրաճանաչության շրջանից: Դրանք փոքրածավալ արձակ ստեղծագործություններ են, որոնք չունեն ամբողջական դիպաշար և հանգամանորեն բնութագրվող կերպարներ: Մարդկանց կյանքի կամ արտաքին աշխարհի նկարագրությունները տրվում են ակնարկների ձևով, միաձուլվում հուզական զեղումների և խորհրդածությունների հետ, որոնք ստեղծում են ընդհանուր քնարական մթնոլորտ:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոցներից են: Դրանք նպաստում են՝

- _ երեխայի կենսափորձի, բառապաշարի հարստացմանը,
- _տրամաբանական մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը,
- _մտային հնարների (վերլուծություն, համադրում, համեմատում, հակադրում ,ընդհանրացում) ձևավորմանը,
- _ բնավորության և աշխարհայացքի ձևավորմանը,

- _ բարձր բարոյական հատկանիշների՝ հայրենասիրության, ընկերասիրության, աշխատասիրության, ազնվության, պատասխանատվության, մարդասիրության, հանդուրժողականության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը
- _ գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- _ հայեցի մտածողության և ավանդույթների պահպանմանը:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները տրվում են որպես օժանդակ նյութեր, որոնք պարզաբանում են բնագրերի թե՛ արտաքին, թե՛ ներքին կողմերը և խորացնում ու ամբողջացնում դրանց գլխավոր միտքը: Դասագրքերում զետեղված մանրապատում ստեղծագործությունները ոչ միայն համապատասխան են բնագրերին, այլև՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին: Դրանք թե՛ իրենց բովանդակությամբ, թե՛ իրենց ձևով երեխաներին տալիս են մայրենի լեզվի և հայեցի մտածողության գեղեցիկ օրինակներ:

Առածներն ու ասացվածքները հայ ժողովրդական բանահյուսության մարգարիտներ են: Նրանք առաջացել են մարդկանց աշխատանքային գործընթացնում: Թե՛ առածը, թե՛ ասացվածքը հակիրճ, պատկերավոր, իմաստալի ժողովրդական խոսք են: Նրանցում արտացոլված են ժողովրդի կյանքի ու կենցաղի բոլոր կողմերը՝ ընտանիքը, դաշտն ու անտառը, հասարակությունը, նրա պահանջները, ձգտումներն ու սովորույթները, նրա վերաբերմունքը բնության, անհատի գործունեության ու կյանքի տարբեր երևույթների վերաբերյալ: Դրանց միջոցով մարդիկ հնարավորություն են ունենում երեխաներին ըմբռնել տալ՝ չարն ու բարին, լավն ու վատը, սուտն ու կեղծիքը, ինչպես նաև ժողովրդական կյանքն ու մտածողությունը: Ուստի չափազանց մեծ է դրանց բարոյադաստիարակչական, ճանաչողական-իմացական արժեքը: Որպես դիպուկ ու համառոտ խոսքի տեսակներ՝ առածներն ու ասացվածքները նպաստում են երեխաների լեզվի մշակմանն ու հարստացմանը, տրամաբանական, պատկերավոր մտածողության, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Առածներն ու ասացվածքները պետք է լինեն պարզ և հասկանալի երեխաների համար, այնուամենայնիվ երեխաներին բացատրելու անհրաժեշտությունը միշտ եղել է: Դրանք արտահայտված են ժողովրդական պարզ այլաբանությամբ:

Առածներն ու ասացվածքները թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ և թե՛ լեզվառճական կողմով շատ նման են, բայց տարբեր են բնույթով: Առածներում բնորոշ

միտքը արտահայտվում է անուղղակի՝ այլաբանական ձևով *(<<Լավ է գիտունին լինել գերի, քան անգետին՝ սիրելի>>,* << Որ աղբյուրից մարդ ջուր խմի, այն աղբյուրին քար չի գցի*>>:)*, իսկ ասացվածքներում՝ ուղղակի ձևով՝ առանց այլաբանության *(<<Ամեն գործի վերջն է գովելի>>, <<Բարի խոսքը հարստությունից լավ է>>)*: Առածներն ունեն երկու կողմ, մեկը՝ արտաքին, գրական-գեղարվեստական, իսկ երկրորդը՝ ներքին, բարոյախրատական: Օրինակ՝ *երկաթը տաք-տաք կծեծեն* առածը երեխաներն ընկալում են հենց ուղիղ իմաստով՝ քանի դեռ տաք է, հեշտ է նրա կռելը: Այնուհետև կարելի է ներկայացնել առածի այլաբանական իմաստը՝ *այսօրվա գործը վաղվան չեն թողնի:* Ասացվածքն առածից տարբերվում է նրանով, որ այն չունի երկրորդ՝ այլաբանական իմաստ, նրանում արտահայտված միտքն ուղիղ է ասված: Օրինակ՝

Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք:

Հայրենիքը արևից տաք, ոսկուց թանկ է և այլն:

Առածի և ասացվածքի այս տարբերությունը երեխաներին ընկալելի պետք է դարձնել գործնական ճանապարհով՝ առանց տեսական բացատրությունների: Առաջին դասարանում պետք է ներկայացնել առածի միայն ուղղակի իմաստը, որովհետև այլաբանական իմաստը դեռևս հասանելի չէ երեխաների գիտակցությանը: Իսկ երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններում կարելի է բացատրել առածների ոչ միայն ուղղակի, այլ նաև այլաբանական իմաստը, վերլուծել, հասկացնել ոչ միայն այն, ինչ տեսանելի է, այլ նաև այն, ինչ թաքնված է դրա տակ: Եթե առածն ու ասացվածքը օգնում են ճիշտ հասկանալու առակների վերացական բովանդակությունը, ապա առակներն էլ կարող են օգնել հասկանալու առած-ասացվածքների կոնկրետ բովանդակությունը: Նշեցինք, որ առածներն ու ասացվածքները մայրենիի դասագրքերում զետեղված են գեղարվեստական ստեղծագործությունների հետ՝ որպես լրացուցիչ նյութ, և պարզաբանում են բնագրի այս կամ այն միտքը՝ կապվելով նրա ենթատեքստի հետ: Անհրաժեշտ է, որ դրանք աշակերտները անգիր սովորեն և տեղին օգտագործեն: Այդ նպատակով ուսուցիչը պետք է հատուկ աշխատանք տանի՝ հանձնարարելով նշել, թե որ առածը կամ ասացվածքը կհամապատասխանի բնագրին՝ իբրև վերնագիր, վերջաբան, գործող հերոսների արարքները բնութագրող նախադասություն, ենթատեքստը բացահայտող միտք: Եթե երեխաները ճիշտ և տեղին

են օգտագործում առածն ու ասացվածքը, ապա նշանակում է, որ նրանք ընկալել են դրանց իմաստներն ու արժեքներ: Մայրենիի դասագրքերում զետեղված առածներն ու ասացվածքները միմյանցից տարբերվում են իրենց գաղափարական բովանդակությամբ: Առածների և ասացվածքների ենթատեքստում անխնա ծաղրվում են **ստախոսությունը***(<< Աղվեսն ինչքան լինի զգույշ, թակարդը կընկնի նա վաղ թե ուշ>>, <<Ասեղը պարկում չես թաքցնի>>, <<Ստի ոտքը կարճ է>>, <<Սուտը սուտ ասողի տունն է քանդում>>:),* **պարծենկոտությունը***(<< Պարծենկոտի մեջը փուտ է, ինչ որ ասի, կեսը սուտ է>>:),* **եսասիրությունը***(<< <<Իմն>> ու <<քոնը>> տուն կքանդի>>:),* **հիմարությունը**, **չարությունը**, **ծուլությունը***(<< Ով ալարի, ոչ դալարի>>, <<Անբանի համար ամեն օր տուն է>>, <<Ծառի տակին պառկելով՝ բերանդ տանձ չի ընկնի>>:),* **ագահությունը***(<<Ագահությունը մարդուն կործանում է>>:),* **պարծենկոտությունը***(<< Դու քեզ մի՛ գովիր, թող ուրի՛շը գովի>>, <<Գործն արա՛, հետո պարծեցի՛ր>>:),* **գողությունը***(<< Ձու գողացողը ձի էլ կգողանա>>:),* գովաբանվում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են **հայրենասիրությունը** *(<<Հայրենիքը արևից տաք, ոսկուց թանկ է>>, <<Հարազատ տնից լավը չկա>>, <<Լավ վարդն իր հողում կբուսնի>>, <<Տնից որ գնաս, տանդ գինը նոր կիմանաս>>:)* **բարությունը** *(<<Բարին որ չլիներ, չարն աշխարհը կքանդեր>>, << Հացը հացթուխին տու՛ր, մեկն էլ ավե՛լ տուր>>, <<Դու ուրիշին օգնի՛ր, Աստված էլ քեզ կօգնի>>, <<Բարի խոսքը հարստությունից լավ է>>, <<Լավությու՛ն արա, ջու՛րը գցիր, մարդիկ չիմանան, ձուկը հո կիմանա>>:)* **աշխատասիրությունը***(<< Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>>, <<Աշխատանքը բարիք է>>, << Արհեստ ունեցողը մինչև կեսօր սոված կմնա>>, << Գարունը չցանես, աշնանը չես հնձի>>, <<Ով աշխատի, նա կուտի>>:),* **գիրք կարդալը***(<< Գիրքը քո լավագույն բարեկամն է. պահպանի՛ր գիրքը>>:),* **քաջությունը***(<<Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք>>, <<Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար>>:),* **հյուրասիրությունը** *(<<Պանիր ու հաց, սիրտը բաց>>, <<Հյուրը տանտիրոջ վարդն է>>:),* **քչախոսությունը***(<<Շա՛տ լսիր, քի՛չ խոսիր>>, <<Պարանի երկարն է լավ, խոսքի՝ կարճը>>:),* **համառությունը***(<< Ամեն բանի սկիզբն է դժվար>>, << Ամեն բանի վերջն է գովելի>>:),* **միաբանությունը***(<<Ամեն թռչուն իր երամով է ուժեղ>>, << Բռունցքն ավելի զորեղ է, քան տասը մատը>>, <<Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես>>, <<Միայնակ ծառը քամուց կվախենա>>, <<Մի ձեռքը ծափ չի տա>>, <<Մենակ մարդն անթև թռչուն է>>, <<Միասնությունն ուժ է>>:),* **համեստությունը** *(<<<<Ես>>, միշտ՝ <<ես>>. պետք է լինել համեստ ու հեզ>>:),*

ճշմարտախոսությունը *(<<Ճշմարիտ խոսքը հաճախ դեղի պես դառն է, բայց բուժիչ է>>:),* հավատարմությունը*(<<Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի>>, <<Ուրախություն լինի, թե վիշտ, լավ ընկերը կողքիդ է միշտ>>, <<Հավատարիմ ընկերը գին չունի>>, << Ինչ աղբյուրից մարդ ջուր խմի, այն աղբյուրին քար չի գցի>>),* խելքը*(<< Ոսկին հարստություն չէ, խելքն է հարստություն>>, << Լավ է գիտունին լինել գերի, քան անգետին՝ սիրելի>>, <<Կյանքում խելքն ավելի կարևոր է, քան ուժը>>, <<Անալի կերակուրին ճար կա, անալի խելքին ճար չկա>>:),* լեզվի կարևորությունը *(<< Անուշ լեզուն մեղրից քաղցր է>>, <<Թուրը մեկ մարդ սպանեց, լեզուն՝մեկ բանակ>>, <<Ցորեն հաց չունես, ցորեն լեզու ունեցիր>>:),* ժամանակի ճիշտ օգտագործումը*(<< Գործը վաղվան մնաց՝ իմացի՛ր՝ կորավ գնաց>>, << Ժամանակը ոսկի է>>, << Այսօրվա գործը վաղվան չեն թողնի>>, <<Մուշտակը կարի՛ր ամռանը, մանգաղը սրի՛ր ձմռանը>>:),* ընկերասիրությունը*(<< Ընկեր չունեցող մարդն անթև թռչուն է>>, <<Ինչքան էլ խելոք լինես, ընկերոջդ հետ* խորհրդակցի'ր*>>, <<Մարդն իր ընկերներով է հարուստ և ուժեղ>>, <<Ընկերով մահը հարսանիք է>>:),* մեծի նկատմամբ հարգանքը*(<<Մեծին չլսողի ոտքը քարին կառնի>>):*

Հանելուկը երևույթի կամ առարկայի հակիրճ, փոխաբերական նկարագիրն է, ուր քողարկված տրվում են կռահվող երևույթի հատկանիշը, կամ իմացվող առարկան փոխարինվում է վերջինիս հատկությունն ունեցող երևույթով, ստիպում երեխային մտածել: Բազմազան են հանելուկների թեմաները: Դրանք, լինելով ժողովրդական ստեղծագործություններ, ընդգրկում են գյուղը, քաղաքը, մարդկանց կենցաղը, կյանքը, սովորությունները, պատկերացումները, ըմբռնումներն ու հարաբերությունները: Հանելուկներում ուշադրության կենտրոնում են ընտանի և վայրի կենդանիները, ընտանի և վայրի թռչունները, գազանները: Տարբեր ձևով է ցույց տրվում, թե կենդանիներից ու թռչուններից յուրաքանչյուրն ի՛նչ օգուտ է տալիս մարդուն: Հանելուկի հարցադրման և լուծման ընթացքը շարժում է երեխայի միտքը, դիպչում է նրա ինքնասիրությանը և նա ձգտում է հնարավորինս արագ և անսխալ դուրս գալ այդ իրավիճակից: Հանելուկը զարգացնում է երեխայի հարցասիրությունը և դիտողականությունը, խորացնում գիտելիքները և ընդլայնում մտահորիզոնը, նպաստում ստեղծագործական մտածողության և երևակայության զարգացմանը:

Հեքիաթը բացահայտում է երեխաների ներքին հնարավորությունները, զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունները և միաժամանակ դաստիարակչական շատ խնդիրներ լուծում՝ ձևավորելով կրտսեր դպրոցականների արժեքային համակարգը: Երեխաների հետ խոսելով տվյալ ժանրի կառուցվածքի մասին՝ պետք է նրանց բացատրել այն հանգամանքը, որ հեքիաթում մի խումբ կերպարներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներն իրականացնելու մղումով: Այդ կերպարներն իրար օգնում են կամ խանգարում: Իրար դեմ կանգնած են բարի և չար ուժեր: Հեքիաթը պետք է անպայման ավարտվի բարի ուժերի հաղթանակով, իսկ բարու հաղթանակը հեշտությամբ չի տրվում: Ընտրյալ հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջոցով, բավարարում իրենց առջև դրված անիրականանալի պայմաններ, հաղթահարում անհաղթահարելի արգելքներ, ընդ որում բարին մենակ չի գործում, քանի որ նրան օգնում են հրաշագործ ուժերը: Կարևոր է, որ երեխան հասկանա, որ բարու համար հատկանշական է հանդուրժողականությունը, բարյացակամությունը, հարգալից վերաբերմունքը, կարեկցանքը ուրիշի տառապանքի նկատմամբ, երախտագիտությունը, երախտապարտությունը, նախանձի, հիշաչարության, վրեժխնդրության, բացակայությունը: Չարի համար բնութագրական է բռնությունը, նախանձը, անհանդուրժողականությունը, անբարյացակամությունը, ատելությունը, երախտամոռությունը, հիշաչարությունը, վրեժխնդրությունը: Չարի որակներ ծնող պատճառ է մեծամտությունը: Հեքիաթը երեխային օգնում է խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր ու հանդիսավոր երևույթները, գաղտնի առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք: Հեքիաթի միջոցով կրտսեր դպրոցականը հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերն այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը: Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ և իմաստուն լինել, ինչպես և աղքատը: Աղքատը նախանձ չէ, լիասիրտ է: Նա անտրտունջ կրում է իր դժբախտությունները: Անվրեժ է չարիքի դեմ: Հեքիաթի միջոցով երեխան գիտակցում է այն հանգամանքը, որ ոչ աղքատությունը, ոչ որբությունը, ոչ էլ ձախորդությունը արատներ չեն: Կարևոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթներն՝ իրական կյանքի օրինակներով, առանց վերամբարձ խրատաբանության: Այդ կերպ

վեր է հանվում հեքիաթի բարոյախոսություն:Հեքիաթները բաժանվում են տեսակների և ենթատեսակների: Տարածված են հրաշապատում կամ կախարդական, իրապատում, կենդանական, կենցաղային-առօրեական հեքիաթները:

Հրաշապատում հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի՝ դևերի, կախարդների, վհուկների, վիշապների դեմ: Դեպքերը տեղի են ունենում ստորերկրյա թագավորությունում, երևակայական աշխարհներում, որտեղ անհավատալին դառնում է իրական: Հերոսներին օգնում են ձին, թռչունը, բարի պառավը կամ իմաստուն ծերունին: Հեքիաթներում չարի և բարու պայքարը մեծ մասամբ ավարտվում է բարու հաղթանակով:

Իրապատում հեքիաթներն արտացոլում են ժողովրդի կյանքը, մարդկային վսեմ ձգտումները, հալածվածների և ճնշվածների ճակատագիրը, ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկային զանազան արատներ:

Կենդանական հեքիաթներում անձնավորվում են տարբեր կենդանիներ, պատկերվում են նրանց առանձին հատկություններն ու վարքը: Կենդանիների (օրինակ՝ գայլի, աղվեսի, արջի, կկվի, բվի, օձի, առյուծի և այլն) միջոցով այլաբանորեն ներկայացվում են մարդկային որոշակի հատկանիշներ՝ ինչպես չարությունը, խորամանկությունը, նախանձը, ագահությունը, ժլատությունը, մեծամտությունը, այնպես էլ բարությունը, անձնազոհությունը, վեհանձնությունը, ազնվությունը, հավատարմությունը, իմաստնությունը և այլն:

Մեր օրերում մեծ կիրառություն և նշանակություն ունի հեքիաթաթերապիան: Հեքիաթաթերապիան գործնական հոգեբանության ուղղություններից է, որն օգտագործում է հեքիաթի ռեսուրսները մի շարք խնդիրների լուծման նպատակով՝ դաստիարակություն, կրթություն, անձի զարգացում, վարքի շտկում և այլն: Հեքիաթաթերապիան օգնում է հոգեբանին հաճելի շփում հաստատել այցելուի հետ, հաղթահարել նրա հոգեբանական դիմադրությունը և աշխատել նրա այնպիսի խնդիրների հետ, որոնք նա այս կամ այն պատճառով դեռ պատրաստ չէ քննարկել: Հեքիաթաթերապիան շատ կարևոր նշանակություն ունի երեխայի հետ աշխատելիս, քանի որ այն օգնում է.

- երեխայի դաստիարակության, զարգացման, կրթության հարցերում,

- երեխայի ինքնաճանաչման հարցերում,
- շրջակա աշխարհի հետ փոխըմբռնման հարցերում,
- մտածողության, հիշողության, երևակայության զարգացման հարցերում,

Ժամանակակից երեխային բավարար չէ պարզապես հեքիաթ կարդալ, զրուցել բովանդակության և նրա հերոսների մասին, այլև անհրաժեշտ է նրան սովորեցնել բացահայտել հեքիաթում թաքնված իմաստները և կյանքի դասերը: Լսելով այդ ամենը՝ երեխան աստիճանաբար գիտելիքներ կկուտակի այս աշխարհի վերաբերյալ, ձեռք կբերի կարևորագույն բարոյական արժեքներ: Հատկանշական է, որ այն երեխաները, որոնց համար հեքիաթ են կարդում, ոչ միայն ավելի արագ են սկսում խոսել, այլև կազմում են նախադասություններ սահուն, գրական լեզվով:

Հայ բանահյուսության հնագույն տեսակներից մեկը առակն է: Առակները տարրական դասարանների դասագրքում ամենից հաճախ հանդիպող գեղարվեստական ստեղծագործություններից են: Այն բարոյախոսական, փոխաբերական փոքր ծավալի պատմվածք է մարդկանց մասին, նրանց արատների և թերությունների մասին: Այդ արատներն ու թերությունները հանդես են գալիս գերազանցապես կենդանիների, թռչունների, ձկների կերպարներում, նրանցից յուրաքանչյուրին բնորոշ գործողությունների միջոցով: Կենդանիների փոխհարաբերությունների վկայակոչմամբ՝ բավականաչափ թափանցիկ կերպով խարազանվում են հասարակության տարբեր խավերի և մարդկային բնավորության զանազան վատ գծերը:Առակներում յուրաքանչյուր կենդանի հանդես է գալիս իր այն վարքագծով, որով նա հայտնի է մարդուն նրա դարավոր կենսափորձից: Օրինակ՝ նապաստակը հանդես է գալիս որպես վախկոտության մարմնացում, աղվեսը՝ խորամանկության, գայլը՝ ագահության, առյուծը՝ ուժի: Նշված և բազմաթիվ այլ գծերի բացահայտումով ժողովուրդը պարսավում, ծաղրում, դատապարտում է բոլոր նրանց, ովքեր իրենց աղվեսային խորամանկությամբ ու քծնանքով, գայլային ագահությամբ ու դաժանությամբ, իշային հիմարությամբ ու բթությամբ օտար ու թշնամի են դառնում մարդուն: Ուստի, հեշտությամբ հասկացվում է, թե հեղինակը ինչ է ցանկանում ասել այդ առակով, ում և ինչ նկատառմամբ է ծաղրում: Առակն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է հեքիաթին, քանի որ առակի մեջ ևս առկա են կենդանիների, առարկաների և երևույթների անձնավորումը,

վառ երևակայության ուժը և գույների խտացումը: Առակները սովորաբար բաղկացած են երեք մասից՝ պատմողական, տրամաբանական և բարոյական կամ եզրափակման: Դրանք զարգացնում են ընթերցողի երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը, նպաստում քննադատական վերաբերմունքի ձևավորմանը: Ուստի պատահան չէ, որ հին ժամանակներից ի վեր առակները տեղ են գտել դասագրքերում և ուսուցողական տեսակետից առակների կրթական ու դաստիարակչական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում:

Այսպիսով, ծանոթանալով ժողովրդական բանահյուսության ժանրերին, կրտսեր դպրոցականները պատկերացում են կազմում կյանքի լավ և վատ կողմերի, բարի և չար երևույթների ձևավորման մասին: Չնայած այն հանգամանքին, որ կրտսեր դպրոցականները ժողովրդական բանահյուսության որոշ տեսակներին ծանոթանում են դեռևս մանկիկային փուլում, այնուամենայնիվ դրանց տեսական գիտելիքներին, առանձնահատկություններին ծանոթանում են մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների միջոցով:

Գլուխ 2. Ժողովրդական բանահյուսության ժանրերի ուսուցումը տարրական դպրոցում (հետազոտական մաս) իրականացման նկարագրություն և արդյունքների վերլուծություն

Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակն է բացահայտել աշակերտների արժեքային համակարգը և պարզաբանել, թե ինչպես է ժողովրդական բանահյուսությունը նպաստում երեխաների արժեքային համակարգի ձևավորմանը:

Առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրության նպատակով կազմել ենք հարցաթերթիկ կրտսեր դպրոցականների համար: Հետազոտությունն իրականացվել է 3 փուլերով.

- Առաջին փուլում ուսումնասիրել ենք հիմնախնդրի վերաբերյալ գրական աղբյուրներ, կազմել հարցաթերթիկներ:
- Երկրորդ փուլում անցկացրել ենք հետազոտություն:
- Երրորդ փուլում մշակել ենք ստացված տվյալները, կատարել ենք վերլուծական աշխատանք, ձևակերպել ենք եզրակացություններ:

<<Ժողովրդական բանահուսության դերը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում>> թեմայի շրջանակներում կատարել ենք աշակերտներին ուղղված հարցաթերթիկների վերլուծական աշխատանք, որի նպատակն է բացահայտել երեխաների արժեքային համակարգը, հետաքրքրությունների շրջանակը: : Հետազոտությունն անցկացրել ենք Մ. Նալբանդյանի անվան h 33 հիմնական դպրոցի երրորդ և չորրորդ դասարաններում: Հետազոտությանը մասնակցել են 33 աշակերտներ, որից 18-ը՝ երրորդ դասարանում սովորող աշակերտներ , իսկ 15-ը՝ չորրորդ :

Հարցաթերթիկում ընդգրկված հարցերից առաջինը նպատակ ուներ պարզաբանել, թե ժողովրդական բանահյուսության ժանրերից որոնք են ավելի հարազատ կրտսեր դպրոցականներին: 33 աշակերտներից 20 –ը նշել էին, որ սիրում են ընթերցել հեքիաթ, 9 աշակերտ՝ առակ (հիմնականում՝ 3-րդ դասարանցիները), 4 աշակերտ՝ էպոս: : Մեր հետազոտական աշխատանքը ապացուցեց, որ հեքիաթը եղել և առայսօր մնում է մանկան ամենասիրելի ստեղծագործությունը:

Երկրորդ հարցի նպատակն էր պարզել, թե ինչ են սովորեցնում երեխաներին առակները և հեքիաթները: Աշակերտները տվել էին տարբեր պատասխաններ: Օրինակ՝ բարություն, ազնվություն,ընկերասիրություն, բարու հաղթանակը չարի նկատմամբ, իմաստություն, արդարություն, քաջություն, հրաշքների իրականացում, օգնություն, հարգանք, հոգատարություն և այլն:

Այսպիսով, կարող ենք նշել, որ հեքիաթները երեխաներին սովորեցնում են, որ աշխարհում կան դժվարություններ, անարդարություններ ու չարություններ, բայց այդ ամենի կողքին կա նաև ուրախությունն ու հավատը, և որ ամենակարևորն է, հեքիաթները սովորեցնում են, որ եթե մարդ չի հանձնվում, այլ պայքարում է իր երջանկության համար, ապա անպայման հաղթում է:

Երեխաներին հանձնարարված էր հորինել հեքիաթ: 33 աշակերտներից 29-ը հորինել էին հեքիաթ դրական ավարտով: Ընդհանուր առմամբ ողջունելի է այն հանգամանքը, որ երեխաները կարողանում են ստեղծագործել:Պարզեցինք, որ հեքիաթները յուրահատուկ աշխարհ է ստեղծում երեխաների համար: Այստեղ կարելի է հիշել Հովհաննես Թումանյանի խոսքերը.<<Հեքիաթ գրելը կարծում եմ հեշտ ու հանաք բան չէ.դա իրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է>>: [4, էջ 29]Հեքիաթը զարգացնում է նրանց հուզաճանաչողական գործունեությունը և

ձևավորում կյանքի նկատմամբ դրական վերաբերմունք:

«Ո՞ր հերոսին կցանկանայիք նմանվել» հարցին երեխաները բազմատեսակ պատասխաններ էին տվել. Օրինակ՝ Քաջ նազար, Սպիտակաձյունիկ, Զրահարս, առյուծ՝ մեկնաբանելով, որ բոլոր հեքիաթներում նա ամենաքաջն ու ամենաարդարն է, Սասունցի Դավիթ և այլն: Երբ հարցրեցինք աշակերտին, թե ինչու՞ է նա ցանկանում նմանվել Քաջ նազարին, հիմնավորեց այսպես. նրա բախտը միշտ բերում է կյանքում և ինքն էլ է ուզում, որ իր բախտն միշտ բերի: Աշակերտների պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ նրանք սիրում են դրական հերոսներին և փորձում են նմանվել այդ հերոսներին , ինչը շատ ողջունելի է: Հարցաթերթիկները լրացնելուց հետո երեխաներին հանձնարարված էր նկարել նշված թեմաներից որևէ մեկով՝ նշելով վերնագիրը (բարություն, խաղաղություն, ընկերասիրություն, սեր, հոգատարություն): Երեխաները նկարել էին հիմնականում սեր, բարություն և խաղաղություն թեմաներով բավականին գեղեցիկ եվ վառ գունավորված նկարներ:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում դիտման մեթոդով նկատեցինք, որ երրորդ դասարանում ուսուցչի կողմից կազմակերպված խաղերի ժամանակ աշակերտների միջև հաճախ վեճեր էին ծագում: Մի խումբ աշակերտներ, ունենալով բարձր առաջադիմություն, անկարգապահ վարք էին դրսևորում, խաղերի ժամանակ հաճախ վիրավորում էին իրենց այն դասընկերներին, ովքեր համեմատաբար ավելի ցածր առաջադիմություն ունեին, սակայն հաղթող էին դառնում : Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երրորդ դասարանցիները սիրում էին կարդալ ինչպես հեքիաթներ, այնպես էլ առակներ, որոշեցինք ընտրել <<Առյուծն ու մուկը>> առակը՝ ինքնուրույն ընթերցանությունից:

Փորձարարական աշխատանքի նկարագրություն.

Նախապատրաստական զրույց.

Նախապատրաստական զրույցի ընթացքում, հարցով դիմեցի աշակերտներին.

- Երբևէ որևէ մեկին օգնե՞լ եք: Ինչպե՞ս: Կամ հակառակը. ձեզ օգնե՞լ են, երբ դրա կարիքն եք ունեցել: Պատմեք այդ մասին:

Աշակերտները ներկայացրեցին մի քանի դեպքեր, երբ օգնել են շրջապատի մարդկանց, և այնպիսի դեպքեր, երբ իրենց են օգնել հարկ եղած դեպքում: Իսկ այն հարցին, թե ում կարող ենք մենք համարել լավ ընկերներ, աշակերտները պատասխանեցին, երբ օգնում ենք մարդկանց, դրանով լավ և բարի գործեր ենք կատարում և դառնում ենք լավ ընկերներ:Լավ ընկերը նա է, ով կարողանում է անհրաժեշտ պահին ձեռք մեկնել իր ընկերոջը կամ շրջապատի մարդկանց և լավ արարքներով փոխհատուցել մարդկանց:

Հանելուկների միջոցով աշակերտները կռահեցին առակի հերոսներին և նկարագրեցին նրանց:

Ճստճստան է ու փոքրիկ

Եվ կրծում է ամեն ինչ:

Երբ որ փիսիկ է տեսնում,

Արագ փախչում է, վազում:(մուկ)

Կենդանիների արքան

Հսկա է նա իսկական,

Հզոր, քաջ է ու արի,

Միաժամանակ՝ բարի: (առյուծ)

Աշակերտների հետ խոսեցինք նաև առակի մասին: Այն, որ կենդանիները և թռչունները բացի մուլտֆիլմերից խոսում են նաև հեքիաթներում և առակներում: Առակների միջոցով հեղինակները ցանկացել են հասկացնել այն, ինչը չեն կարողացել անմիջական ասել: Առակի ենթատեքստի տակ թաքնված է մի խրատական միտք: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը,

հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Այսօր մենք կծանոթանանք Եզոպոսի առակներից մեկին , որը կոչվում է «Առյուծն ու մուկը»: Առաջին անգամ առակի ամբողջական ընթերցումը կատարեցի ինքս, քանի որ աշակերտների կողմից ստեղծագործության հիմնական մտքի ըմբռնումը մեծապես պայմանավորված է ուսուցչի արտահայտիչ ընթերցմամբ:

Առյուծն ու մուկը

Առյուծը քնած էր: Հանկարծ մի մուկ բարձրացավ նրա մարմնի վրա:Առյուծն իսկույն զարթնեց և բռնեց մկանը: Մուկն սկսեց աղաչել առյուծին, որ իրեն բաց թողնի:

- Հզո՛ր առյուծ, բա՛ց թող ինձ, խնդրո՛ւմ եմ, մի օր այնպես կպատահի, որ ես էլ քեզ կօգնեմ:

- Մի սրա՛ն նայիր. դու ինչո՞վ կարող ես ինձ օգնել,- ասաց առյուծը:

Բայց քանի որ առյուծի տրամադրությունը շատ բարձր էր, բաց թողեց մկանը: Մի օր այնպես պատահեց,որ առյուծն ընկավ ցանցի մեջ: Նա սկսեց մռնչալ, փորձում էր ցանցը կտրտել, բայց չէր կարողանում: Մուկը հեռվից լսեց առյուծի մռնչյունը, մոտեցավ առյուծին, հետո կանչեց ուրիշ մկների:Հավաքվեցին մկները և սկսեցին ցանցը կտրել:

Այդպես առյուծն ազատվեց:

Երկրորդ անգամ աշակերտներն առակն ընթերցեցին հատված առ հատված՝ զուգահեռաբար կատարելով բառային և ուղղագրական աշխատանք տեքստի շուրջ:

Տեքստը բաժանեցինք տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածների: Աշակերտները տեքստն ընթերցեցին շարունակաբար և ընտրովի: Անցկացրեցինք քննարկում և վերլուծություն: Առակները բաժանեցինք հատվածների և աշակերտները վերնագրեր ընտրեցին դրանց համար:

1) Մուկն առյուծի թաթերում
2) Մկան խնդրանքը
3) Առյուծը ցանցում
4) Մկների օգնությունը

Աշակերտները բնութագրեցին առակի կերպարներին, նրանց արարքների շուրջ արտահայտում էին դատողություններ և մտահանգումներ: Վեննի Դիագրամի միջոցով նկարագրվեցին առակի հերոսները՝ առյուծն ու մուկը:



Բանավոր հարցադրումների, զրույցի, քննարկումների, վերլուծությունների և մեկնաբանությունների միջոցով աշակերտները վեր հանեցին առակի հիմնական իմաստը, հասկացան դրա այլաբանական իմաստը:

- Ինչի՞ մասին էր առակը:

- Ո՞րն է առակի հիմնական իմաստը:

-Ի՞նչ սովորեցրեց մեզ այս առակը:

Աշակերտները տվեցին հետևյալ պատասխանները, որ մկան և առյուծի կերպարների միջոցով արտահայտվում են մարդկանց կերպարները, նրանց լավ և վատ արարքները, վերաբերմունքը մարդկանց նկատմամբ, մարդիկ պետք է զիջող լինեն միմյանց նկատմամբ, հարգեն դիմացինին և նրա կարծիքը, չթերագնահատել մարդկանց և նրանց կարողությունները,կյանքում պետք է անպայման լավություն անել և կարողանալ լավ արարքներով օգտակար լինել միմյանց: Բարոյախրատական իմաստի բացահայտումից հետո առակի ազդեցությունն ամրակայեցինք համապատասխան խորհուրդ ունեցող ասացվածքներով:

- Լավությու՛ն արա, ջու՛րը գցիր, մարդիկ չիմանան, ձուկը հո կիմանա:
- Դու ուրիշին օգնի՛ր,Աստված էլ քեզ կօգնի:
- Մարդու կյանքի ամենամեծ երջանկությունը ուրիշներին օգտակար լինելու մեջ է:

- Գյուղ կանգնի, գերան կկոտրի:
- Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:
- Միասնությունը ուժ է:
- Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես:
- Ինչ ցանես, այն էլ կհնձես:

Այսպիսով, առակը, լինելով երեխաների սիրելի ժանրերից մեկը, մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում:Այստեղ այլաբանության միջոցով ծաղրվում են մարդկային վատ հատկանիշները և գովաբանվում առաքինությունները:

Հետազոտության ընթացքում ընտրեցինք նաև <<հեքիաթ>> ժանրը 3-րդ դասարանում: Աշխատանքս սկսելուց երկու օր առաջ աշակերտների հետ միասին ստեղծեցինք հեքիաթի սենյակ: Այնպես կահավորեցինք, որ երեխաները այդտեղ իրենց զգում էին հեքիաթային կերպարների աշխարհում: Ես մեծ նշանակություն տվեցի այդ իրադրության գեղագիտական բնույթին, որի մեջ երեխաները պետք է ուկնդրեին հեքիաթը: Յուրաքանչյուր նկար, յուրաքանչյուր իրազննական կերպար սրում է գեղարվեստական խոսքի նկատմամբ երեխայի ընկալությունը, ավելի խորն է բացահայտում հեքիաթի գաղափարը: Հեքիաթի սենյակի լուսավորությունը ևս մեծ դեր էր խաղում: Դասարանում պահպանել եմ հետևյալ սկզբունքը. ոչ ոք չպետք է նստի մեջքով դեպի գրատախտակը: Յուրաքանչյուրին պետք է տեսանելի լինի դասարանի կենտրոնական մասը՝ գրատախտակը: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է կարողանա տեսնել իր խմբի բոլոր անդամներին:

Նախապատրաստական զրույցն իրականացնելու ընթացքում , նախ աշակերտներին հարցրեցի՝

1. Ո՞րն է կոչվում հեքիաթ:
2. Քանի՞ տեսակ են լինում հեքիաթները :
3. Բնութագրե՛նք յուրաքանչյուր տեսակը:

Այնուհետև <<մտագրոհ >> մեթոդի միջոցով թվեցինք մարդկային դրական բնավորության գծեր: Աշակերտները նշեցին ՝ բարի, ազնիվ, ճշտախոս, քչով բավարարվող, արդար և այլ գծեր: Թվեցինք նաև բնավորության բացասական գծեր՝

ագահ, ժլատ, չար, ստախոս, դաժան, եսասեր, բամբասկոտ և այլն: Այնուհետև ավելացրինք դրանց լավ և վատ հետևանքները, որ բացասական գծերը չարիք են, որոնցից պետք է խուսափել: Բացասական գծերից ագահության մասին խոսեցինք՝ նշելով , որ ագահ են այն մարդիկ, որոնք ուզում են ամեն ինչ իրենցը լինի, իսկ մյուսները՝ոչինչ չունենան: Այդպիսի մարդիկ, սովորաբար լինում են հարուստները, որոնց չի բավարարում իրենց հարստությունը և ձգտում են անընդհատ այն շատացնել: Վերջիվերջո , ագահները կործանվում են և նրանց հարստությունը մնում է ուրիշներին:





Համառոտ զրույց վարեցի նկաիչ-նկարազարդողների մասին և ցույց տվեցի միևնույն հեքիաթի տարբեր նկարիչների նկարազարդումները: Երեխաները հասկացան, որ միևնույն հերոսներին տարբեր նկարիչներ պատկերում են յուրովի, քանի որ յուրաքանչյուրն ունի իր սեփական պատկերացումը: Աշակերտների համար կարդացի <<Քսակը>> հեքիաթը՝ պահպանելով կարդալուն հատուկ բոլոր պահանջները, որպեսզի աշակերտները կարողանան հասկանալ և ընկալել կարդացածը: Աշակերտները լուռ և ուշադիր լսում էին ինձ : Այնուհետև հեքիաթը բաժանեցինք տրամաբանական ամբողջություն կազմող մասերի և յուրաքանչյուր մաս կարդաց մեկ աշակերտ: Ես պատրաստել էի տարբեր գույնի ծաղկաթերթիկներ և նրանց վրա գրել էի 1, 2, 3 թվանշանները: Երեխաները ընտրեցին ու բաժանվեցին խմբերի ու յուրաքանչյուր խումբ ինքն էր ընտրում իր խմբից ,թե ով է ընթերցելու և միասին կազմում վերնագրեր: Յուրաքանչյուր հատված կարդալուց հետո կատարում

էինք բառային աշխատանք : Բառային աշխատանքի ժամանակի գրատախտակին գրեցինք ու բացատրեցինք անհասկանալի բառերի իմաստները (քսակ, ժլատ, թանկարժեք, տուգանք,ծառա), նաև ուղղագրության տեսանկյունից դժվարություն ներկայացնող բառերը(երդվել, վերադարձնել, մեջ,թագավոր): Օգտագործեցի հարց ու պատասխանի մեթոդը, որի ժամանակ աշակերտները կատարեցին համադրում, հակադրում, վերլուծություն:Հանձնարարեցինք համապատասխան բառերով բնութագրել հերոսներին ըստ նրանց արարքների:

1. Ի՞նչ սովորեցինք այս հեքիաթից:
2. Հեքիաթի ո՞ր մասը ձեզ ավելի շատ դուր եկավ:
3. Ձեր կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինի մարդը:
4. Ի՞նչ հետևանքների կարող է հանգեցնել ագահությունը և ստախոսությունը:
5. ԻՆչու՞ ծառան գնաց դատավորի մոտ:
6. Ի՞նչ հնարամտությամբ դատավորը լուծեց նրանց խնդիրը:

Ֆիզկուլտ դադար. <<Իմացի՛ր ո՞ր հեքիաթից է>> խաղը: Նախօրոք զգուշացրել եմ երեխաներին, որ հատվածներ եմ ասելու ծանոթ հեքիաթներից: Նրանք պետք է ուշադիր լսեն ու ասեն, թե ո՞ր հեքիաթից է ասվածը և ո՞վ է գրել:

Այնուհետև տվեցինք հեքիաթի բարոյախրատական եզրակացությունը, որը հիմնականում վերաբերվում էր ագահության քննադատությանը և նրա վնասակար ու կործանարար հետևանքների բացահայտմանը:

Աշակերտները համապատատասխան բառերով բնութագրեցին հերոսներին ըստ նրանց արարքների.

Հարուստ	Ծառա

Աշակերտները ասացին առածներ, ասացվածքներ, հանելուկներ ագահ մարդկանց մասին՝ մեկնաբանելով դրանց իմաստը: Այսպես՝

<<Փոս փորողը ինքն է ընկնում փոսը>>:

<<Ով ինչ բրդի, էն կխրթի>>:

<<Երբ խոսքը քո բերանում է, դու ՛ես նրա տերը, հենց բերանիցդ դուրս եկավ՝ նա՛ է քո տերը>>:

Այն ի՞նչն է՝ կարծես լիքն է ու ցմփոր,

Աղքատի համար՝ ցամաքած ջրհոր: (քսակ)

Հինգ րոպեանոց շարադրանքի մեթոդով երեխաներին հանձնարարեցի գրել փոքրիկ շարադրություն <<Նամակ ագահ և ստախոս հարուստին>> վերնագրով:

Երկրորդ դաս.

Հեքիաթի սենյակում աշակերտները դիտեցին մի քանի տարբեր հեքիաթների նկարազարդումներ և որոշեցին, թե ով է գլխավոր հերոսը, ինչպես են նրան պատկերել նկարիչ-նկարազարդողները և ամենակարևորը՝ փորձեցին հասկանալ հերոսի բնավորությունը և նրա շարժուձևը: Աշակերտներին բացատրեցի, թե նկարիչներն ինչպես են ընտրում գունային երանգները: Օրինակ, որ գույնը որոշում է գլխավոր հերոսին և նրա տրամադրությունը: Աշակերտներին առաջարկեցի ընտրել այն հատվածը, որն ուզում են նկարազարդել և սկսեցին աշխատանքը: Ցուցադրեցի աշակերտների բոլոր նկարները: Նկարի ընդհանուր բովանդակության բացահայտման , հեքիաթի կառուցվածքային բովանդակությունը վերարտադրելու, հերոսներին, առարկաների, երևույթների նկարագրման, բառապաշարի հարստացման նպատակով աշակերտներին ուղղեցի հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կվերնագրես քո նկարը:
- Ի՞նչ գույներ ես օգտագործել հերոսների տրամադրությունն արտահայտելու համար:
- Ո՞ր հատվածն է նկարված:
- Ի՞նչ է տեղի ունեցել մինչև այդ հատվածը:
- Ի՞նչ է տեղի ունենալու այդ հատվածից հետո:
- Ինչո՞ւ ես հերոսին այդպես նկարել:
- Ի՞նչ բառերով կարող ես նկարագրել քո նկարած հերոսին, առարկան:

- Էլ ինչպե՞ս կարելի է նկարել այս տեսարանը:

Շատ հետաքրքիր էին նկարել աշակերտները: Առաջին երեխան ագահ մարդուն պատկերել էր ամբողջությամբ դեղին և հսկա մարդ: Մեկն էլ նկարել էր մտորող մարդ, որի ուղեղում ոսկյա կոպեկներ էին պտտվում: Մյուսն էլ ագահ մարդուն նկարել էր հին շորերով, կուչ եկած պատի տակ, որը իմ ուշադրությունը ավելի շատ սևեռեց իր վրա: Երբ ես հարցրեցի այդ աշակերտին,թե ինչու է այդպես նկարել, նա պատասխանեց, որ նա խղճուկ, անմարդասեր, հիմար, ագահ, մարդկությանը ոչ պիտանի անհատ է , և իրավունք չունի նման մարդը թագավոր լինել: Աշակերտները ագահ թագավորին պատկերել էին գորշ գույներով: Նրանք պատասխանեցին, որ նա չար, ագահ, անկուշտ,վատ մարդ էր, և միայն այդ գույներն են համահունչ նրա կերպարին: Աշակերտներից մեկը ասաց, որ ինքը շատ է սիրում կենդանական հեքիաթներ և ագահ , ստախոս թագավորի փոխարեն կցանկանար հանդես գար գայլը, որը ագահության խորհրդանիշն է, որ նրա միջոցով ծաղրվեր ու պատժվեր ագահությամբ օժտված մարդը: Ես հարցրեցի, թե ինչու գայլը, նա պատասխանեց, որ ինքը կարդացել է շատ կենդանական հեքիաթներ, ու ագահ թագավորի փոխարեն հանդես է եկել գայլը, հավատարիմ մարդու փոխարեն՝ շունը, հնարամտությունը՝ աղվեսը և այլն:

Անցկացրած հետազոտական աշխատանքի ժամանակ ուշադրություն դարձրեցի յուրաքանչյուր երեխայի արտահայտած բառերի, դեմքի արտահայտության վրա: Կային աշակերտներ, ովքեր շատ պասիվ էին, բայց նրանք հեքիաթի սենյակում ցուցաբերեցին ակտիվություն, և նրանց աչքերում վառվում էին հիացմունքի կրակներ:Երեխաների մեծամասնության մոտ զարգացած էր մտքի ճկունությունը: Հեքիաթը աշակերտների բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է: Այն նպաստում է երեխաների ինքնուրույնության և ակտիվության զարգացմանը: Քանի որ հեքիաթը մանկան մտածողության, ազնիվ զգացմունքների և ձգտումների կենսատու աղբյուր է, պետք է ասել, որ հեքիաթային կերպարների միջոցով երեխաների գիտակցության մեջ է թափանցում բառը իր նրբագույն երանգներով, նա դառնում է երեխայի հոգեկան կյանքի ոլորտը, մտքերն ու զգացմունքներն արտահայտելու միջոց՝ մտածողության կենդանի իրականություն: Հեքիաթային կերպարների առաջացրած զգացմունքի ազդեցությամբ երեխան

սովորում է մտածել բառերով: Առանց կենդանի ու վառ կերպարներով հեքիաթի, հնարավոր չէ պատկերացնել մանկան մտածողությունն ու մանկան խոսքը որպես մարդու մտածողության ու որոշակի աստիճան:

Հեքիաթը՝ բանահյուսության կարևոր ժանրերից մեկը, որը երեխային դնում է ճիշտ ուղու վրա, խարազանում է բացասական գծերը, ողջունում դրական գծերը, զարգացնում է աշակերտների երևակայությունը, ընդլայնում նրանց աշխարհայացքը, նրանց ստիպում է հուզվել, ապրումակցել, հետաքրքրասիրություն զարգացնել, ընթերցասիրություն մշակել: Հեքիաթը տարիքային սահմանափակումներ չի ճանաչում, մարդը ցանկացած տարիքում կարող է դաստիարակվել և կրթվել:

Այսպիսով, ժողովրդական բանահյուսության ժանրերի ուսումնասիրման ժամանակ աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ ընթերցածը, վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այլև ձեռք են բերում անձնային բարձրարժեք որակներ, զարգանում է նրաց գեղագիտական ճաշակը, զարգանում է լեզվամտածողության պատշաճ մակարդակ: Շատ կարևոր է ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպումը, որ ձևավորվի ստեղծագործության ենթատեքստը հասկանալու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, համեմատելու և հակադրելու կարողություններ: Յուրաքանչյուր ուսուցիչ բանահյուսության ժանրերի ուսուցումը պետք է կարողանա ճիշտ ուղիներով անցկացնել, դաստիարակչական արժեքները ընկալելի դարձնել աշակերտներին: Ուսուցիչը պետք է կարողանա աշխատանքային գործունեությունը կազմակերպել այնպես, որպեսզի ոչ մի թերություն թույլ չտա: Չէ՞ որ ծուռ տնկած ծառը դժվար է ուղղել:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով <<Ժողովրդական բանահյուսության դերը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում>> թեման,ձևակերպում ենք հետևյալ եզրակացությունները.

1. Ժողովրդական բանահյուսությունն ազգային մշակույթի հարուստ և մեծարժեք բնագավառներից է, առանց որի հնարավոր չէ պատկերացում կազմել աշխատավոր ժողովրդի պատմության մասին:

2. Հեքիաթները և առակները երեխային տանում են մի աշխարհ, ուր երեխան ընկնում է երևակայության գիրկը, մտածում և ստեղծագործում է:

3. Մեր կողմից կատարած փորձարարական աշխատանքների արդյունքները վկայում են, որ բանահյուսության կիրառումը մեծապես նպաստում է տարրական դպրոցի աշակերտների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, նրանց համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության ու հմտությունների արժեքային համակարգի ձևավորմանը:

Ստեղծագործ մանկավարժը, օգտագործելով ժողովրդական բանահյուսության ժանրային հարուստ տեսականին, կարող է բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ, եթե անցկացնի զրույցներ, բաց դասեր, դաս-միջոցառումներ, քննարկի կոնկրետ բանահյուսական նյութեր բարոյական որևէ որակ ձևավորելու նպատակով, կազմակերպի շարադրությունների մրցույթներ՝ մշտական կապվածության մեջ պահելով սովորողների ժողովրդական բանահյուսության հետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, Եր., 1940, 582 էջ
2. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ մշակույթի նախարարություն ,Ոչ նյութական մշակութային ժառանգականություն, Երևան 2009, 127 էջ:
3. Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Հայպետ հրատ., 1949թ., էջ 292
4. Սաքո Սարգսյան, Երգիծանքը հայ ժողովրդական հեքիաթներում և առակներում, << Հայաստան>> հրատ. 1969թ.էջ 29
5. Գալստյան Ա. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանության նյութեր (3-րդ դասարան), Եր., Էդիթ պրինտ, 2010, 183 էջ
6. Գյուլամիրյան Ջ. Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Եր., <<Լույս>>, 1998, 125էջ
7. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., <<Զանգակ-97>>, 349 էջ
8. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Եր., 2008, 159 էջ
9. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Եր., 2010, 190 էջ
10. Գրիգորյան Գ. Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 1980, 470 էջ
11. Գրիգորյան Գր., Հայ բանահյուսություն քրեստոմատիա, Եր. 1974, 531 էջ
12. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1960, 171 էջ
13. Ջրբաշյան Է. Մ., Մախչյան Հ. Մ., Գրականագիտական բառարան, Եր., <<Լույս>>, 1980, 350 էջ
14. Սահակյան Յ., Հայ ժողովրդական բանահյուսության նյութեր, Եր., 2003, 158 էջ
15. Սահակյան Յ., Հայ բանահյուսության նմուշներ մանուկների համար, Եր., 1998
16. Սարգսյան Վ. Ս., Այբբենարան, Եր., 2006, 155 էջ

Հավելված

Դասի պլան 2

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 4-րդ

1. **Դասի թեման-** <<Հրաշք վրձինը>> (հեղինակ՝ Անահիտ Պարսամյան)
2. **Դասի նպատակները՝**

ա. *Ուսուցողական* ՝

_ հարստացնել բառապաշարը (տունկ, ունկ, շնչակտուր, ընկղմվել, համրիչ),

_ ուղղագրական արժեք ունեցող բառերի յուրացում (ավտոմեքենա, վրձին, Զմեռ պապ, Նոր տարի, բազկաթոռ, առողջանալ),

_ գաղափար տալ պատմողական և հարցական նախադասությունների մասին,

_ ամրապնդել բառակազմական գիտելիքները:

բ. *Զարգացնող* ՝

_ զարգացնել արտահայտիչ և հասկանալով կարդալու կարողությունը,

_ զարգացնել նորածանոթ բառերը խոսքում կիրառելու կարողությունները,

_ զարգացնել բնագրի ենթատեքստը առած-ասացվածների միջոցով մեկնաբանելու կարողությունը,

_ զարգացնել ստեղծագործական երևակայությունն ու մտածողությունը,

_ զարգացնել հաղորդակցական կարողությունները,

_ զարգացնել մտային հնարները (վերլուծել, համեմատել, համադրել, ընդհանրացնել):

գ. *Դաստիարակչական* ՝

_ դաստիարակել սեր, հոգատարություն,անձնվիրություն:

3. **Ակնկալվող արդյունքներ_** Դասի ավարտին սովորողները պետք է՝

_ կարողանան նորածանոթ բառերը օգտագործել խոսքում,

_ սովորեն որոշ բառերի ուղղագրությունը,

_ կարողանան ցույց տալ իրենց ստեղծագործական ունակությունները,

_ կարողանան ճիշտ ընտրել այն առած-ասացվածքները, որոնց միջոցով հնարավոր կլինի ամբողջությամբ ներկայացնել բնագրի բովանդակությունը:

4. **Դասի կահավորումը**_ վրձին, աշխատանքը գնահատելու համար սմայլիկներ, առած-ասացվածքների և մաղթանք-օրհնանքների համար ծրարներ, թղթեր, մատիտներ՝ իրենց զգացողությունները պատկերելու համար, հարցաթերթիկ, հրաշք պարկ, որի մեջ կան հանելուկներ:

5. **Դասի ընթացքը.**

Խթանման փուլ.

Ուս.- Դուք հավատու՞մ եք հրաշքների:

Աշ.- Այո՛, հավատում ենք, որ աշխարհում հրաշքները շատ են լինում:

Ուս.- Իսկ ի՞նչ եք հասկանում <<հրաշք>> ասելով:

Աշ.- Հրաշքներ լինում են հանկարծակի և մարդկանց մեծ երջանկություն են պատճառում: Հրաշքների շնորհիվ կարող են մարդիկ բուժվել, թռչունները երգել:

Ուս.- Իսկ ի՞նչ տարբերություն կա <<հրաշք>> և <<կախարդանք>> բառերի միջև:

Աշ.- Հրաշքները կարող են լինել նաև առանց կախարդանքի, իսկ կախարդանքները լինում են հրաշքներով:

Ուս.- Եկե՛ք այս օրը անվանենք հրաշք օր, իսկ մեր դասը՝<<հրաշք դաս>>: Համաձա՞յն եք:

Աշ.-Այո՛: Եկե՛ք մեր դասարանը այսուհետև անվանենք հրաշքների աշխարհ, քանի որ այստեղ ամեն օր հրաշք է կատարվում:

Ուս.- Շատ լավ:

ՈՒս.- Շատ հետաքրքիր են ձեր առաջարկությունները: Քանի որ խոսեցիք հրաշքի մասին, պետք է ձեզ ասեմ, որ այսօր մեզ օգնության է եկել<<Հրաշք պարկը>>: <<Հրաշք պարկի>> մեջ կան հրաշք հանելուկներ, որոնց պատասխանելով՝ մենք կիմանանք մեր հրաշք բնագրի վերնագիրը: Պատրա՞ստ եք:

Աշ.-Այո՛:

Ուս.- Այսպիսով՝ ուշադիր լսե՛ք մեր առաջին հրաշք հանելուկը: Իսկ պատասխանելու համար պետք է պարզապես բարձրացնել մեր հրաշք ձեռքերը: Դե՛, սկսեցինք:

/<<Հրաշք պարկի>> մեջ կան 2 հրաշք հանելուկներ/:

Փայտե մարմին,

Մազոտ գլուխ:

Աշ.- Վրձին:

Ուս.- Կեցցե՛ք: Հիմա գտնենք հաջորդ հանելուկի պատասխանը:

Փայտի ծառին՝ մազափունջ,

Աշխատում է լուռ ու մունջ,

Գույներն իրար է խառնում,

Հրաշքներ է հնարում:

Աշ.- Վրձնի մասին է խոսքը:

Ուս.- Կեցցե՛ք: Իսկ այժմ կարո՞ղ եք կռահել մեզ անծանոթ բնագրի վերնագիրը:

Աշ.- Մեր բնագրի վերնագիրը <<Վրձին>>-ն է:

Ուս.- Շատ մոտ եք պատասխանին:

Աշ.-Մենք կարծում ենք , որ բնագրի վերնագիրն է <<Կախարդական վրձինը>>:

Ուս.- Շատ լավ: Մեր դասի վերնագիրն է <<Հրաշք վրձինը>>: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ հրաշք վրձնի մասին կարող է լինել մեր պատմությունը:

Աշ.- Մեր պատմությունը այնպիսի հրաշք վրձնի մասին է, որի միջոցով մենք կարող ենք կատարել շատ հրաշքներ:

ՈՒս.- Ինչպիսի՞ հրաշքների մասին կարող է խոսվել բնագրում, որոնք իրականացվել են կախարդական վրձնի միջոցով:



Աշ.- /Աշակերտների պատասխանները գրառվում են գրատախտակին/:

Ուս.- Շա՛տ ապրեք: Դուք տվեցիք գեղեցիկ և հրաշալի պատասխաններ:

Իմաստի ընկալման փուլ.

ա. Դասանյութի ընթերցում սովորողների կողմից

Ուս.- Ցանկանու՞մ եք ծանոթանալ մեր բնագրի բովանդակությանը:

Աշ.- Այո՛:

Ուս.- Դրա համար բացում ենք դասագրքի 133 էջը և լուռ ընթերցում ենք՝ պարզելու համար ճիշտ են մեր գրած պատասխանները, թե՞ ոչ:

ՈՒս.- Այժմ եկե՛ք արտահայտիչ կարդանք բնագիրը՝ գլխավոր միտքը հասկանալու համար:/ Կարդում են մեկ անգամ՝ միմյանց շարունակելով: Երկրորդ անգամ կարդում են հատվածաբար՝ միաժամանակ մեկնաբանելով և ընգծելով նորածանոթ, ուղղագրական արժեք ունեցող բառերը /:

բ. *Հարցազրույց բնագրի շուրջ և բնագրի ենթատեքստի վերհանում:*

Ուս.- Հիմա ձևակերպում ենք մտքեր բնագրի բովանդակության շուրջ:

Աշ.- Ո՞վ է ստեղծագործության գլխավոր հերոսը:

Աշ.- Ստեղծագործության գլխավոր հերոսը Բակուրն է:

Աշ.- Ե՞րբ են տեղի ունենում այս դեպքերը:

Աշ.- Այս դեպքերը տեղի են ունենում Նոր տարվա առաջին օրը:

Աշ.- Ինչո՞վ էր զբաղվում Բակուրը առավոտյան:

Աշ.- Առավոտյան Բակուրը սկսեց դասավորել նվերները՝ մատիտներն ու վրձինը, ավտոմեքենան ու ձիուկը, ինքնաթիռը, կոնֆետները:

Աշ.- Առաջինն ի՞նչ պատկեր նկարեց Բակուրը:

Աշ.- Բակուրը առաջինը նկարեց թմբլիկ ճնճղուկ:

Աշ.- Մինչև ե՞րբ կարող էր վրձինը հրաշքներ գործել:

Աշ.- Վրձինը կարող էր հրաշքներ գործել միայն Նոր տարվա առաջին օրը:

Աշ.- Ի՞նչ հրաշքներ գործեց կախարդական վրձինը:

Աշ.- Վրձինը կենդանացրեց ճնճղուկին, խաղողի տունկը պաշտպանեց չորանալուց, շնիկի համար բուն կառուցեց, նորոգեց գավաթը, բուժեց Խաչիկ պապիկի աչքերը:

Ուս.- Ո՞վ էր նվիրել վրձինը:

Աշ.- Վրձինը Բակուրին նվիրել էր հորեղբայրը:

Ուս.- Ինչպե՞ս էր այն դարձել կախարդական:

Աշ.- Այն կախարդական էր դարձրել Զմեռ պապիկը:

Ուս.- Ո՞ր գործը կիսատ թողեց Բակուրը և ինչո՞ւ:

Աշ.- Բակուրը կիսատ թողեց նավակ նկարելու գործը, որովհետև հիշեց, որ հարևան բակում ապրող Խաչիկ պապը կույր է և կարող էր նրան բուժել:

Ուս.- Ո՞ր հրաշքից ավելի շատ ուրախացավ Բակուրը:

Աշ.- Բակուրը շատ ուրախացավ, երբ կարողացավ բժշկել Խաչիկ պապի աչքերը:

Ուս.- Թվե՛ք բնագրի բոլոր հերոսներին:

Աշ.- Բնագրի հերոսներն են՝ Բակուրը, Զմեռ պապը, Խաչիկ պապը, նրա ընտանիքի անդամները, Բակուրի մայրիկը:

Ուս.- Ի՞նչ էր ուզում ասել Անահիտ Պարսամյանը այս պատմության միջոցով:

Աշ.- Նա ուզում էր ասել, որ պետք է օգնել բոլոր մարդկանց, եթե կա դրա հնարավորությունը: Եթե մենք օգնենք ուրիշներին, նշանակում է, որ մենք մեզ ենք օգնում: Մարդը երջանիկ է, երբ բարի գործ է անում:

/ Այս հարցերի քննարկումից հետո դասարանը բաժանում ենք խմբերի: Խմբերի բաժանումը կատարվում է վիճակահանության միջոցով: Դրա համար հրաշք պարկի մեջ լցնում ենք 3 գույնի քառակուսիներ: Նույն գույնի քառակուսի ունեցող երեխաները մոտենում են միմյանց և կազմում եմ մեկ խումբ: Խմբի յուրաքանչյուր անդամի տալիս ենք հարցաթերթիկ: Յուրաքանչյուր հարցաթերթիկի մեջ զետեղված են նույն հարցերը: Այդ հարցերին պատասխանելով՝ երեխաները հնարավորություն կունենան արտահայտելու սեփական կարծիքը: Այնուհետև վիճակահանության միջոցով յուրաքանչյուր խմբից մեկ հոգի կարդում է իր գրած պատասխանները, իսկ մյուսները կարող են կարդալ ազատ դասաժամերին/:

Հարցաթերթիկ

1. Ինչո՞ւ է հեղինակը գրել այս ստեղծագործությունը:

---

2. Ի՞նչը կփոխեիք այս ստեղծագործության մեջ և ինչո՞ւ:

---

3. Ի՞նչ եք կարծում, եթե Խաչիկ պապը կույր չլիներ, ի՞նչ կաներ Բակուրը:

---

4. Ինչպիսի՞ն էինք մենք, ինչպիսի՞ն դարձանք և ինչպիսի՞ն կուզենայինք դառնալ այս ստեղծագործությունն ընթերցելուց հետո:

---

5. Ի՞նչ երաժշտություն ենք լսում այս ստեղծագործությունը կարդալիս:

---

6. Ի՞նչ գույներ ենք տեսնում այս պատմվածքը կարդալիս և ինչո՞ւ:

---

7. Նկարագրե՛ք կամ նկարե՛ք այն հատվածը, երբ Բակուրը շնչակտուր ներս մտավ Խաչիկ պապենց տուն:

8. Նկարագրի՛ր Բակուրի թե՛ արտաքին տեսքը և թե՛ ներքին հատկանիշները:

---

9. Ի՞նչ վերնագիր կդնեիք այս ստեղծագործությանը:

---

10. Ի՞նչ կանեիք, եթե ունենայիք կախարդական վրձին:

---

11. Մեկ նախադասությամբ գրե՛ք բնագրի ընդհանուր միտքը:

---

12. Ինչո՞ւ է վրձինը կախարդական միայն Նոր տարվա առաջին օրը:

Ուս.- Հիմա կատարելու ենք խմբային աշխատանք: Որպեսզի բաժանվենք խմբերի, անհրաժեշտ է հրաշք պարկից հանել քառակուսիներ: Նույն գույնի քառակուսի ունեցող երեխաները կդառնան մեկ խումբ: Խումբ դառնալուց հետո որոշե՛ք նաև ձեր խմբի անունը: Ընտրե՛ք այնպիսի անուն, որը ինչ-որ կերպ կապված լինի բնագրի հետ: Դե՛, հիմա բոլորդ հանե՛ք ձեր քառակուսիները և գտե՛ք ձեր ընկերներին:/ Երեխաները միանգամից կազմում են խմբեր/:

Ուս.- Յուրաքանչյուրիդ առաջ դրված է հարցաթերթիկ, դուք պետք է պատասխանեք բոլոր հարցերին: Աշխատանքը կատարելու համար ձեզ տրվում է հինգ րոպե ժամանակ:

Ուս.- Բոլորդ շատ լավ եք աշխատում, կեցցե՛ք: Յուրաքանչյուր խմբից միայն մեկ հոգի է կարդալու իր աշխատանքը: Ձեզ տալիս եմ 30 վայրկյան ժամանակ, որպեսզի որոշեք, թե ո՛վ է կարդալու, իսկ մյուս աշխատանքները կփակցնենք դասարանում: Պատրա՞ստ եք: Աշ.- Այո՛:

Ուս.- Դե՛, ուրեմն կայացրե՛ք ձեր որոշումը:

/ Խմբերը կատարում են իրենք որոշումները և ներկայացնում են իրենց աշխատանքը/:

Ուս.- Անցնենք մյուս աշխատանքի կատարմանը: Դրա համար ես յուրաքանչյուրիդ կտամ մեկական ծրար: Այդ ծրարների մեջ կան 2-ական թղթեր: Այդ թղթերից մեկի վրա գրում եք 2 առած-ասացվածք, որոնք կհամապատասխանեն մեր բնագրին: Միավոր կվաստակի այն խումը, որը կաշխատի լուռ, քննարկմանը կմասնակցեն խմբի բոլոր անդամները, և ճիշտ կկատարի առաջադրանքը: Յուրաքանչուր խումբ պետք է ուշադիր լսի մյուս խմբերի պատասխանները, քանի որ պետք է գնահատի: Աշխատանքի համար ձեզ տրվում է 5 րոպե ժամանակ: Բոլորի՞ն են պարզ պահանջները:/ Աշխատանքի ավարտից հետո, քննարկում ենք բոլոր խմբերի աշխատանքները և գնահատում/:

Աշ.- Այո՛: Առաջին խումբ_*<<Լավությու՛ն արա, ջու՛րը գցիր, մարդիկ չիմանան, ձուկը հո կիմանա>>:<<Դու ուրիշին օգնի՛ր, Աստված էլ քեզ կօգնի>>: Երկրորդ խումբ_<<Բարին որ չլիներ, չարն աշխարհը կքանդեր>>: <<Բարի խոսքը հարստությունից լավ է>>: Երրորդ խումբ_<< Հացը հացթուխին տու՛ր, մեկն էլ ավե՛լ տուր>>: <<Թռչունը թևով է թռչում, մարդը՝ անունով ու գործով>>:*

Ուս.- Դե՛ սկսեցինք աշխատել:

Ուս.- Այժմ կկատարենք մեր մյուս աշխատանքը: Հիմա եկեք պատկերացնենք այն պահը, երբ Բակուրը կախարդական վրձնի միջոցով բուժեց Խաչիկ պապի աչքերը: Ի՞նչ բարի խոսքեր կարող է ասել և՛ Խաչիկ պապը, և՛ նրա ընտանիքը: Ի՞նչ խոսքեր են մեզ հաճախ ասում մեր մեծերը:

Աշ.- Մեր մեծերը մեզ հաճախ են օրհնում, մաղթանքներ ասում:

Ուս.- Դե ուրեմն, եկեք պատկերացնենք այդ տեսարանը և ասենք, թե ի՛նչ օրհնանքներ և մաղթանքներ կարող են ասել Խաչիկ պապիենք: Միավոր կվաստակի այն խումբը, ով կգրի շատ օրհնանք-մաղթանքներ: Այս աշխատանքը կատարելու համար ձեզ տրվում է 3 րոպե ժամանակ:

Աշ.- Առաջին *խումբ_Հորով, մորով լինես: Ծլես, ծաղկես, զորանաս:Ապրի արևդ: Աստված գործերիդ հաջողություն տա:*Երկրորդ խումբ_*Աստված պահի քեզ: Ջրի նման երկար կյանք ունենաս: Աստված քեզ երկար կյանք տա: Բարին քեզ հետ:* Երրորդ խումբ_*Աստված քեզ չարից, փորձանքից հեռու պահի: Սիրտդ միշտ բաց ու լի լինի: Օրերդ ուրախության մեջ անցնեն: Հաջողությունը միշտ քեզ հետ լինի:*

/Այս աշխատանքի արդյունքները ամփոփելուց հետո բանավոր կատարում ենք բնագրից հետո տրված առաջադրանքները/:

Ուս.- Կեցցե՛ք, երեխանե՛ր, դուք այսօր շատ լավ աշխատեցիք: Հիմա բոլորը ուշադիր ինձ են լսում: Ունենք երկու նախադասություն:/ Նախադասությունները գրվում են գրատախտակին/: **Այսօր պայծառ օր է** և **Այսօր պայծա՞ռ օր** է նախադասությունների միջև:

Աշ.- Առաջին նախադասության մեջ պատմում ենք, որ այսօր օրը պայծառ է: Իսկ երկրորդ նախադասության մեջ մենք որևէ մեկին հարցնում ենք:

Ուս.- Նախադասությունները լինում են պատմողական, որի միջոցով ինչ-որ բան ենք պատմում, և հարցական, որով հարցնում են մի բանի մասին: Ասացե՛ք օրինակներ:

Աշ.- Այսօր Արմենը եկավ դասի և Ասյօր Արմե՞նը եկավ դասի: Առաջին նախադասությունը պատմողական նախադասություն է, իսկ երկրորդը՝ հրացական:

Ուս.- Հարցական նախադասության մեջ հարցում արտահայտող բառը միշտ արտասանում ենք հարցական հնչերանգով, իսկ գրելիս այդ բառի վերջին ձայնավորի վրա դնում ենք հարցական՝<<՞>> նշան (պարույկ): Օրինակ՝ Այսօր շաբաթվա ո՞ր օրն է: Ո՞վ է առաջին տիեզերագնացը: Այժմ եկե՛ք մեզ անծանոթ բառերը օգտագործելով՝ կազմենք և պատմողական, և՛ հարցական նախադասություններ: Աշխատանքը կատարում եք տետրերում:

Կշռադատման փուլ.

ա. *Դասի ամփոփում:*

/ Ամփոփումը կիրականացնենք << Ես այս դասից սովորեցի….: Իսկ դո՞ւ>>: մեթոդով, որի ժամանակ երեխաները կհարցնեն միմյանց և կտան տարբեր պատասխաններ: Ամփոփմանը կմասնակցեն բոլորը: Ամփոփումից հետո կնշեն յուրացման առաջադրանքը/:

բ. *Բնագրի պլանի կազմում և հարցերի միջոցով պատմելու նախապատրաստում*:

Ուս.- Կազմենք բնագիրը պատմելուն օժանդակող հարցերը, որոնց դուք պատասխանելով՝ կարող եք պատմել բնագիրը:

_ Ե՞րբ են տեղի ունեցել այս դեպքերը:

_ Որտեղի՞ց էր ձեռք բերել Բակուրը կախարդական վրձինը:

_ Ի՞նչ հրաշքներ գործեց Բակուրը վրձնի միջոցով:

_ Ո՞ր հրաշքը երջանկություն պատճառեց Բակուրին:

գ. *Բառատետրում դուրս գրել ուղղագրական արժեք ունեցող բառերը:*

/ Դասագրքում զետեղված առաջադրանքները կարող ենք կատարել հաջորդ ժամին/:

դ. *Յուրացման առաջադրանք:*

Ուս.- Տանը կատարում ենք <<Պատմությունների զամբյուղ>> ենթավերնագրի տակ զետեղված առաջադրանքներից որևէ մեկը: Կամ գրում եք <<Ամանորյա հրաշք>> վերնագրով շարադրություն, կամ Հիսուսի հրաշքներից:

Ուս.- Բոլորդ ձեր օրագրերի մեջ նշում եք յուրացման առաջադրանքը:

Ուս.- Դասը կարդալ, պատմել, սովորել նորածանոթ և ուղղագրական արժեք ունեցող բառերը: Շնորհակալություն: